ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«15» Մարտի 2024թ. N ՄՈ/145-Ա

ք. Արմավիր

«ԱՐՄԱՎԻՐԻ N 10 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2024 թվականի մարտի 14-ի N ՄՈ/143-Ա և N ՄՈ/144-Ա որոշումները, «Արմավիրի N 10 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում փաստաթղթերի հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

որոշում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Ն. Ալավերդյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել «Արմավիրի N 10 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ Վարդուհի Սիմոնյանին (համաձայնությամբ):
3. Հանձնաժողովին (Ն. Ալավերդյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել հինգ աշխատանքային օրվա ընթացքում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությանը

(գլխավոր մասնագետ Ա. Համբարձումյան)՝ աշխատանքներն իրականացնելու համար ապահովել հերթապահ մեքենայի տրամադրումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2024-03-15 11:34:54 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆ-ի կողմից

ՄԱՐԶՊԵՏ՝ **Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ**

Հավելված

Հայաստանի Հանրապետության

Արմավիրի մարզպետի

2024 թվականի Մարտի 15 **ի**

N ՄՈ/ 145 **-Ա որոշման**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Ն. Ալավերդյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության ավագ մասնագետ

Անդամներ՝

Ա. Խլղաթյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության ավագ մասնագետ

Ջ. Եղոյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ

Հանձնող՝

Լիանա Հայրապետյան - «Արմավիրի N 10 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության նախկին տնօրեն

Ընդունող՝

Գայանե Սարգսյան - «Արմավիրի N 10 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**